Հավելված 6
ՇՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-24/ 21 ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

# ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## N ՇՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-24/21

Գ. Ամասիա 05 սեպտեմբերի 2024թ.

Ամասիայի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Ջ. Հարությունյանի, որը գործում է Համայնքի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, Ա/Ձ Ահարոն Ահարոնյանի (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, պատվիրատուի կողմից ձևավորված հանձնաժողովի կողմից տրամադրված ծավալներով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված միավոր արժեքի ներկայացված գնով, ներառյալ դրանցով նախատեսված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը) և միավոր արժեքով ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է, ժամանակին տրամադրել աշխատանքի ծավալները և հասցեն, ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար: Սույն պայմանագրի անբաժանելի մաս է հանդիսանում գնման ընթացակարգին մասնակցելու շրջանակում Կապալառուի կողմից հայտով ներկայացված՝ նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման (օգտագործման) պարտավորության մասին հավաստումը:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուն կատարում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախահաշվային փաստաթղթերին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի միավոր արժեքի -նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 30 հոկտեմբեր 2024թ:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են սույն պայմանագրի հավելված 2-ում ներկայացված օրացուցային գրաֆիկով :

## 2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, շինարարական նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### 3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման՝ ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի 1.1 կամ 1.2 կետով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

### 3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.2.5 Պայմանագրի 3.4.3 կետի 2-րդ ենթակետով նախատեսված գրավոր համաձայնությունը Կապալառուին տրամադրել ....... օրվա ընթացքում:

Եթե սույն կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն Կապալառուին չի տրամադրում գրավոր համաձայնությունը (անհամաձայնությունը), ապա համաձայնությունը Կապալառուի կողմից համարվում է ստացված: Համաձայնությունների ստացման ընթացակարգը կողմերը կարող են իրականացնել նաև էլեկտրոնային փոստի հասցեներին տեղեկատվության փոխանակման միջոցով: Այս դեպքում կողմերը նախապես գրավոր եղանակով փոխանակում են այն էլեկտրոնային փոստերի հասցեները, որոնց պետք է ուղարկվեն տեղեկությունները: Սույն կետով նախատեսված փաստաթղթերը հանդիսանում են կատարողական ակտերի անբաժանելի մասը:

**3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

**3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով , ինչպես նաև անհրաժեշտ շինարարական նյութերով, միջոցներով ու պատշաճ որակով՝ ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3Ապահովել՝

1) շինմոնտաժային աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված ինժեներական հաղորդակցուղիների համակարգերի ( էլեկտրամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխությանև այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

2) նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը)՝ մինչև տեղադրումը (օգտագործումը) դրանց տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները և երաշխիքային ժամկետները նախապես գրավոր համաձայնեցնելով պատվիրատուի հետ:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման (շահագործման) համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օր (առնվազն 365 օրացուցային օր): Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:[1]

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերին և երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N – Հավելվածում:[2]

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե

4.1.1 Կապալառուն ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը

4.1.2 Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթղթերը՝ (հավելված N 3.1) հանձնման-

---

[1] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնման առարկա հանդիսացող շինարարական ծրագիրը պահանջում է նախագծային փաստաթղթեր:*

[2] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե կիրառելի չէ:*

Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը գործնային է կազմում էմինչև 8 000 000- (Ութ միլիոն-) ՀՀ դրամ, ներառյալ՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

5.2 Աշխատանքիմիավոր գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու աղ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:[3]

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ*Ծ ՎԸԳ =ՎԳ1+ՎԳ2+.......... , որտեղ՝

ՄԳ-ն պայմանագրի Հավելված 1 կետում նշված գինն

Ծ-ն Պատվիրատուի կողմից առաջադրված ծավալն է

ՎԳ –ն սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

ՎԸԳ-ն վճարվող ընդհանուր գամարն է;

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն, պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

---

[3] *Գանձապետարանում հաշիվներ չունեցող պատվիրատուների դեպքում սույն կետի վերջին պարբերությունը խմբագրվում է հետևյալ բովանդակությամբ. «Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:»*

ընդունման արձանագրության 2 երկու օրինակ (հավելված N 3),Կատարողական ակտ՝ միավոր արժեքով և թաստացի կատարված ծավալներով,ինչպես նաև ֆոտո հաշվետվություն:

4.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված10 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ , օրինակը կամ աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.4 Եթե պայմանագրի 4.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կապալառուին տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ՝ սահմանված ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողով (այսուհետ՝ ընդունող Հանձնաժողով) ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ ձևավորված հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) Կատարողական ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝ 2

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[4] Ընդ որում տուգանքը հաշվարկվում, է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2, 6.3 և 6.5.1 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.5.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները[5]

| N | Խախտումը | Պատասխանատվությունը |
|---|---|---|
| 1. | Շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը չկատարելը | Տուգանք – պայմանագրային գնի 0.5% չափով |
| 2. | Տեխնիկական անվտանգության նորմերի չպահպանելը | Տուգանք – պայմանագրային գնի 0.5% չափով |
| 3. | Սանիտարահիգիենիկ և բնապահպանական նորմերի չպահպանելը | Տուգանք – պայմանագրային գնի 0.5% չափով |

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները , չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է

---

[4] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
*Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

[5] *Եթե գնման առարկան չի հանդիսանում շինարարական ծրագիր 6.5.1 կետը հանվում է պայմանագրի նախագծից, իսկ 1.2 կետից հանվում են «և հաստատված նախագծանախահաշվային » բառերը և 6.4 կետից հանվում է 6.5.1 կետին կատարված հղումը:*

անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[6]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի

[6] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արիեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կապալառուն պատասխանատվություն է կրում ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում ենթակապալառուի փոփոխման դեպքում Կապալառուն գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:[7]

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:[8]

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի

---

[7] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով:*

[8] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի, կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված աշխատանքի կատարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգպատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները, փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» և 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:[9]

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

---

ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կապալառուն պատասխանատվություն է կրում ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում ենթակապալառուի փոփոխման դեպքում Կապալառուն գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:[7]

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:[8]

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի

---

[7] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով:*

[8] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| Համայնքի ղեկավար Ջ. Հարությունյան | «Ահարոն Ահարոնյան» Ա/Ձ |
| Ամասիայի համայնքապետարան | հասցե՝ ՇՄ, ք. Գյումրի, Տոլստոյի 61 |
| ՀՎՀՀ 05544328 | ՀՎՀՀ 57337665 |
| ՀՀ 900222051271 | բանկ՝ Ինեկոբանկ ՓԲԸ Գյումրու մ/ճ |
| Բանկը՝ Կենտրոնական գանձապետարան | հհ 2050132290391001 |
| ------------------------------- | ------------------------------- |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

*Հավելված թիվ 1*
*,,05,, սեպտեմբերի 2024 թ. կնքված*
*ՇՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-24/21 ծածկագրով պայմանագրի*

**Ամասիայի համայնքապետարանի կարիքների համար Վարչական շենքերի ընթացիկ նորոգման աշխատանքներ**

*Նախահաշիվ մեկ միավոր արժեքով*

| | Աշխատանքի անվանումը | Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/ | ԱԱՀ** /տառերով և թվերով/ | Ընդհանուր գինը /տառերով և թվերով/ |
|---|---|---|---|---|
| *1* | *2* | *3* | *4* | *5=3+4* |
| 1 | 3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով | Երեք հազար երկու հարյուր տասը 3210 | Վեց հարյուր քառասուներկու 642 | Երեք հազար ութ հարյուր հիսուներկու 3852 |
| 2 | 2-րդ կարգի բնահողի հետլիցքծեռքով | Մեկ հազար երեք հարյուր քառասուներկու ամբողջ հինգ տասնորդական 1342,5 | Երկու հարյուր վաթսունութ ամբողջ հինգ տասնորդական 268,5 | Մեկ հազար վեց հարյուր տասնմեկ 1611 |
| 3 | Ավազի շերտի կառուցում, հաստ. 100մմ, ցեմենտե խառնուրդով | Ութ հազար ութ հարյուր յոթանասունհինգ 8875 | Մեկ հազար յոթ հարյուր յոթանասունհինգ 1775 | Տասը հազար վեց հարյուր հիսուն 10650 |
| 4 | Ցեմենտ | Վաթսուներեք հազար յոթ հարյուր 63700 | Տասներկու հազար յոթ հարյուր քառասուն 12740 | Յոթանասունվեց հազար չորս հարյուր քառասուն 76440 |
| 5 | Տարածքի երեսապատում գունավոր բետոնե սալիկներով, 6սմ հաստ. /կարաները լցնել ավազով/ | Վեց հազար ութ հարյուր հիսուն 6850 | Մեկ հազար երեք հարյուր յոթանասուն 1370 | Ութ հազար երկու հարյուր քսան 8220 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 6 | Մուտքի դռան հովարի մետաղական կարկասի կառուցում | Իննսունմեկ հազար երկու հարյուր 91200 | Տասնութ հազար երկու հարյուր քառասուն 18240 | Մեկ հարյուր ինը հազար չորս հարյուր քառասուն 109440 |
| 7 | Պողպատե քառակուսի կտրվածքով խողովակ 60x60x3 | Երկու հազար չորս հարյուր ութսունհինգ 2485 | Չորս հարյուր իննսունյոթ 497 | Երկու հազար ինը հարյուր ութսուներկու 2982 |
| 8 | Յովարի ծածկի իրականացում ց/թիթեղով 0,55մմ | Մեկ հազար երեք հարյուր երեսունհինգ 1335 | Երկու հարյուր վաթսունյոթ 267 | Մեկ հազար վեց հարյուր երկու 1602 |
| 9 | Յովարի ծածկի իրականացման հսմար ց/թիթեղ 0,55մմ | Երեք հազար երեք հարյուր քառասուն 3340 | Վեց հարյուր վաթսունութ 668 | Չորս հազար ութ 4008 |
| 10 | Պատերի գաջի սվաղի քանդում | Երկու հարյուր հիսուն 250 | Հիսուն 50 | Երեք հարյուր 300 |
| 11 | Պատերի սվաղում գիպսոնիտով | Չորս հազար ութ հարյուր յոթանասունհինգ 4875 | Ինը հարյուր յթանասունհինգ 975 | Հինգ հազար ութ հարյուր հիսուն 5850 |
| 12 | Դռան և պատուհանների արտաքին շեպերի սվաղում ց/ավազային շաղախով | Մեկ հազար չորս հարյուր քառասուն 1440 | Երկու հարյուր ութսունութ 288 | Մեկ հազար յոթ հարյուր քսանութ 1728 |
| 13 | Պատերի ներկում՝ ջրադիսպերսիոն ներկով /մածկումով/ | Մեկ հազար երկու հարյուր հիսուն 1250 | Երկու հարյուր հիսուն 250 | Մեկ հազար հինգ հարյուր 1500 |
| 14 | Առաստաղի ներկում ջրադիսպերսիոն ներկով /մածկումով/ | Մեկ հազար յոթ հարյուր երեսունյոթ ամբողջ հինգ տասնորդական 1737,5 | Երկու հարյուր ութսունյոթ ամբողջ հինգ տասնորդական 287,5 | Մեկ հազար յոթ հարյուր քսանհինգ 1725 |
| 15 | Ցեմ, ավազային հարթ շերտի կառուցում 30մմ հաստ | Մեկ հազար վեց հարյուր հիսուն 1650 | Երեք հարյուր երեսուն 330 | Մեկ հազար ինը հարյուր ութսուն 1980 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 16 | Պրեսգրանիտե սալիկներով հատակների կառուցում սոսինձի վրա | Յոթ հազար հարյուր յոթանասուն 7170 | Մեկ հազար չորս հարյուր երեսունչորս 1434 | Ութ հազար վեց հարյուր չորս 8604 |
| 17 | Լամինատից հատակի կառուցում 12մմ հաստ. /շրիշակով, սպունգով/ լավորակ | Վեց հազար ութսունհինգ 6085 | Մեկ հազար երկու հարյուր տասնյոթ 1217 | Յոթ հազար երեք հարյուր երկու 7302 |
| 18 | Պլաստմասե շրիշակների տեղադրում | Մեկ հազար հինգ հարյուր 1500 | Երեք հարյուր 300 | Մեկ հազար ութ հարյուր 1800 |
| 19 | Պատուհանագոգերի կառուցում սոսինձի վրա, կերամոգրանիտե սալիկներով | Տասներկու հազար յոթ հարյուր հիսուն 12750 | Երկու հազար հինգ հարյուր հիսուն 2550 | Տասնհինգ հազար երեք հարյուր 15300 |
| 20 | Պատերի հիդրոմեկուսացում հիդրոմեկուսիչ նյութով | Հինգ հարյուր տասը 510 | Մեկ հարյուր երկու 102 | Վեց հարյուր տասներեք 613 |
| 21 | Պղնձե ջիղերով հաղորդալարի անցկացում ППВГ 2x1,5մմ$^2$ | Չորս հարյուր հիսուն 450 | Իննսուն 90 | Հինգ հարյուր քառասուն 540 |
| 22 | Պղնձե ջիղերով հաղորդալարի անցկացում ППВГ 2x2,5մմ$^2$ | Հինգ հարյուր յոթանասուն 570 | Մեկ հարյուր տասնչորս 114 | Վեց հարյուր ութսունչորս 684 |
| 23 | Պղնձե ջիղերով հաղորդալարի անցկացում ППВГ 2x4մմ$^2$ | Յոթ հարյուր քսան 720 | Մեկ հարյուր քառասունչորս 144 | Ութ հարյուր վաթսունչորս 864 |
| 24 | Լուսատու 30W-LED լամպերով, առաստաղի, IP20 /լամպի հետ միասին/ | Տասնհինգ հազար հինգ հարյուր 15500 | Երեք հազար հարյուր 3100 | Տասնութ հազար վեց հարյուր 18600 |
| 25 | Տուփ վարդակի և անջատիչի տեղադրման | Մեկ հազար 1000 | Երկու հարյուր 200 | Մեկ հազար երկու հարյուր 1200 |
| 26 | Տուփ բաժանարար փակ տեղադրման | Վեց հարյուր յոթանասուն 670 | Մեկ հարյուր երեսունչորս 134 | Ութ հարյուր չորս 804 |
| 27 | Վարդակների տեղադրում | Մեկ հազար ինը հարյուր քսան 1920 | Երեք հարյուր ութսունչորս 384 | Երկու հազար երեք հարյուր 2300 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 28 | Անջատիչների տեղադրում | Երկու հազար ութ հարյուր քառասուն 2840 | Հինգ հարյուր վաթսունութ 568 | Երեք հազար չորս հարյուր ութ 3408 |
| 29 | Սականռ 16x16մմ /2մ/ | Երկու հարյուր քառասունհինգ 245 | Քառասունինը 49 | Երկու հարյուր իննսունչորս 294 |
| 30 | Սականռ 20x20մմ /2մ/ | Երեք հարյուր երեսունհինգ 335 | վաթսունյոթ 67 | Չորս հարյուր երկու 402 |
| 31 | Սականռ 30x30մմ /2մ/ | Հինգ հարյուր քառասուն 540 | Մեկ հարյուր ութ 108 | Վեց հարյուր քառասունութ 648 |
| 32 | Սականռ 40x40մմ /2մ/ | Ութ հարյուր երեսունհինգ 835 | Մեկ հարյուր վաթսունյոթ 167 | Մեկ հազար երկու 1002 |
| 33 | Փայտե դռների քանդում | Մեկ հազար վեց հարյուր հիսուն 1650 | Երեք հարյուր երեսուն 330 | Մեկ հազար ինը հարյուր ութսուն 1980 |
| 34 | Փայտե պատուհանների քանդում պատուհանագոգերի հետ միասին | Մեկ հազար երկու հարյուր հիսուն 1250 | Երկու հարյուր հիսուն 250 | Մեկ հազար հինգ հարյուր 1500 |
| 35 | Փայտե պատուհանների քանդում առանց պատուհանագոգերի | Մեկ հազար երկու հարյուր հիսուն 1250 | Երկու հարյուր հիսուն 250 | Մեկ հազար հինգ հարյուր 1500 |
| 36 | Մետաղապլաստե բլոկով սպիտակ 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ պրոֆիլի դռան տեղադրում | Երեսունութ հազար յոթ հարյուր հիսուն 38750 | Յոթ հազար յոթ հարյուր հիսուն 7750 | Քառասունվեց հազար հինգ հարյուր 46500 |
| 37 | Մետաղապլաստե բլոկով սպիտակ 60մմ հաստ., մեկ տակ ապակով կամ պլաստմասով դռան տեղադրում | Քառասունութ հազար հինգ հարյուր 48500 | Ինը հազար յոթ հարյուր 9700 | Հիսունութ հազար երկու հարյուր 58200 |
| 38 | Մետաղապլաստե բլոկով սպիտակ 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ պրոֆիլի պատուհանի տեղադրում /բացվող/ | Երեսուն հազար հինգ հարյուր 30500 | Վեց հազար հարյուր 6100 | Երեսունվեց հազար վեց հարյուր 36600 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 28 | Անջատիչների տեղադրում | Երկու հազար ութ հարյուր քառասուն 2840 | Հինգ հարյուր վաթսունութ 568 | Երեք հազար չորս հարյուր ութ 3408 |
| 29 | Սակառ 16x16մմ /2մ/ | Երկու հարյուր քառասունհինգ 245 | Քառասունինը 49 | Երկու հարյուր իննսունչորս 294 |
| 30 | Սակառ 20x20մմ /2մ/ | Երեք հարյուր երեսունհինգ 335 | վաթսունյոթ 67 | Չորս հարյուր երկու 402 |
| 31 | Սակառ 30x30մմ /2մ/ | Հինգ հարյուր քառասուն 540 | Մեկ հարյուր ութ 108 | Վեց հարյուր քառասունութ 648 |
| 32 | Սակառ 40x40մմ /2մ/ | Ութ հարյուր երեսունհինգ 835 | Մեկ հարյուր վաթսունյոթ 167 | Մեկ հազար երկու 1002 |
| 33 | Փայտե դռների քանդում | Մեկ հազար վեց հարյուր հիսուն 1650 | Երեք հարյուր երեսուն 330 | Մեկ հազար ինը հարյուր ութսուն 1980 |
| 34 | Փայտե պատուհանների քանդում պատուհանագոգերի հետ միասին | Մեկ հազար երկու հարյուր հիսուն 1250 | Երկու հարյուր հիսուն 250 | Մեկ հազար հինգ հարյուր 1500 |
| 35 | Փայտե պատուհանների քանդում առանց պատուհանագոգերի | Մեկ հազար երկու հարյուր հիսուն 1250 | Երկու հարյուր հիսուն 250 | Մեկ հազար հինգ հարյուր 1500 |
| 36 | Մետաղապլաստե բլոկով սպիտակ 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ պրոֆիլի դռան տեղադրում | Երեսունութ հազար յոթ հարյուր հիսուն 38750 | Յոթ հազար յոթ հարյուր հիսուն 7750 | Քառասունվեց հազար հինգ հարյուր 46500 |
| 37 | Մետաղապլաստե բլոկով սպիտակ 60մմ հաստ., մեկ տակ ապակով կամ պլաստմասով դռան տեղադրում | Քառասունութ հազար հինգ հարյուր 48500 | Ինը հազար յոթ հարյուր 9700 | Հիսունութ հազար երկու հարյուր 58200 |
| 38 | Մետաղապլաստե բլոկով սպիտակ 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ պրոֆիլի պատուհանի տեղադրում /բացվող/ | Երեսուն հազար հինգ հարյուր 30500 | Վեց հազար հարյուր 6100 | Երեսունվեց հազար վեց հարյուր 36600 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 39 | Մետաղապլաստե բլոկով սպիտակ 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ պրոֆիլի պատուհանի տեղադրում /չբացվող/ | Տասնութ հազար հինգ հարյուր 18500 | Երեք հազար յոթ հարյուր 3700 | Քսաներկու հազար երկու հարյուր 22200 |
| 40 | Տանիքի փայտե էլեմենտների ապամոնտաժում | Քսաներեք հազար հինգ հարյուր 23500 | Չորս հազար յոթ հարյուր 4700 | Քսանութ հազար երկու հարյուր 28200 |
| 41 | Տանիքի ծածկույթի քանդում | Երկու հարյուր իննսուն 290 | Հիսունութ 58 | Երեք հարյուր քառասունութ 348 |
| 42 | Տանիքի փայտե էլեմենտների կառուցում, օգտագործելով նոր փայտանյութ | Երկու հարյուր մեկ հազար յոթ հարյուր 201700 | Քառասուն հազար երեք հարյուր քառասուն 40340 | Երկու հարյուր քառասուներկու հազար քառասուն 242040 |
| 43 | Տանիքածածկույթի կառուցում ցինկապատ պրոֆիլավոր թիթեղով ԿՊ25, 0,55 | Հինգ հազար 5000 | Մեկ հազար 1000 | Վեց հազար 6000 |
| 44 | Տանիքի փայտե կոնստրուկցիաների հրդեհապաշտպանում հրակայուն լուծույթով | Վեց հազար վեց հարյուր յոթանասուն 6670 | Մեկ հազար երեք հարյուր երեսունչորս 1334 | Ութ հազար չորս 8004 |
| 45 | Կավարամածի մշակում հրակայուն լուծույթով | Երկու հարյուր հիսուն 250 | Հիսուն 50 | Երեք հարյուր 300 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Համայնքի ղեկավար Ջ. Հարությունյան
Ամասիայի համայնքապետարան
ՀՎՀՀ 05544328
ՀՀ 900222051271
Բանկը Կենտրոնական գանձապետարան

------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Ահարոն Ահարոնյան» Ա/Ձ
հասցե՝ ՇՄ, ք. Գյումրի, Տոլստոյի 61
ՀՎՀՀ 57337665
բանկ՝ Ինեկոբանկ ՓԲԸ Գյումրու մ/ճ
հհ 2050132290391001

------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
,, 05 ,, սեպտեմբերի 2024 թ. կնքված
ՇՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-24/21 ծածկագրով պայմանագրի

## ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ*
## ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԵՐԻ ԸՆԹԱՑԻՔ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը** | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | Ամասիայի համայնքապետարանի կարիքների համար Վարչական շենքերի ընթացիկ նորոգման աշխատանքներ | **Պայմանագրի կնքման օր** | **2024թ հոկտեմբ 30** |
| | | | |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | **Պայմանագրի կնքման օր** | **2024թ հոկտեմբեր 30** |

* *Աշխատանքների կատարման ժամկետը, իսկ փուլային ձևով պայմանագրի կատարման դեպքում՝ առաջին փուլի ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է աշխատանքը կատարել ավելի կարճ ժամկետում: Սույն պայմանը չի կիրառվում փորձաքննություն անցած նախագծային փաստաթղթերով իրականացվող շինարարական աշխատանքների գնման դեպքում:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Համայնքի ղեկավար Ջ. Հարությունյան
Ամասիայի համայնքապետարան
ՀՎՀՀ 05544328
ՀՀ 900222051271
Բանկը Կենտրոնական գանձապետարան

---------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Ահարոն Ահարոնյան» Ա/Ձ
հասցե՝ ՇՄ, ք. Գյումրի, Տոլստոյի 61
ՀՎՀՀ 57337665
բանկ՝ Ինեկոբանկ ՓԲԸ Գյումրու մ/ճ
հհ 2050132290391001

---------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

** *Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա <<Սկիզբը>> սյունակում ժամկետի սկիզբը նշվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը, իսկ «Ավարտը» սյունակում կատարման ժամկետը սահմանվում է օրացուցային օրերով:*

Հավելված N 3

,,05,,      սեպտեմբերի  2024թ. կնքված

ՇՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-24/21ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | **Ընդամենը** |
| 1 | 45460000 | Ամասիայի համայնքապետարանի կարիքների համար Վարչական շենքերի ընթացիկ նորոգման աշխատանքներ | | % | % | % | % | % | | | 4000000 | 8000000 | 8000000 | 8000000 | **8000000** |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Համայնքի ղեկավար Ջ. Հարությունյան
Ամասիայի համայնքապետարան
ՀՎՀՀ 05544328
ՀՀ 900222051271
Բանկը Կենտրոնական գանձապետարան

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Ահարոն Ահարոնյան» Ա/Ձ
հասցե՝ ՇՄ, ք. Գյումրի, Տոլստոյի 61
ՀՎՀՀ 57337665
բանկ՝ Ինեկոբանկ ՓԲԸ Գյումրու մ/ճ
հh 2050132290391001

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ